1.	ԳՊՖ առարկան	Հաճախորդի և պատվիրատուի միջև կնքված պայմանագրի ներքո ապրանքների մատակարարման կամ ծառայությունների/աշխատանքների կատարման պատվեր
2.	ԳՊՖ նպատակայնությունը	Ֆինանսավորումը զուտ նպատակային է և նախատեսված է պատվեր(ներ)ի կատարման հետ, մասնավորապես՝ Հումքի և կիսաֆաբրիկատների ձեռքբերում - Ենթակապալառուների աշխատանքների կատարման վճարում - Աշխատավարձի վճարում - Մաքսային և հարկային ծախսերի վճարում - Բեռնափոխադրման ծախսերի վճարում - Տեստավորման ծախսերի վճարում - Ապահովագրական ծախսերի վճարում - Պատվերի կատարման երաշխիքների տրամադրում - Այլ ծախսեր, որոնք կապված են պատվերի կատարման հետ
3.	ԳՊՖ պայմաններ	- Ֆինանսավորումը տրամադրվում է պատվերի իրականացման շրջանակներում կատարվող ծախսերը հավաստող փաստաթղթերի հիման վրա՝ փուլային տարբերակով: - Պատվերի կատարման նպատակով ձեռք բերվող հումքի և այլ ապրանքանյութական արժեքների և ծառայությունների դիմաց, աշխատավարձի, հարկային պարտավորությունների և պատվերի կատարման հետ կապված այլ վճարումներն իրականացվում են անկանխիկ եղանակով՝ բացառապես Ամերիաբանկում սպասարկվող հաշիվներով: - Պատվերի կատարման նպատակով ձեռք բերվող ապրանքանյութական արժեքների /բեռի/ ապահովագրություն:
4.	ԳՊՖ հաճախորդներ	Իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերեր, որոնք ունեն ֆինանսավորման

		ենթակա գնման պատվերի ոլորտում գործունեության առնվազն 1 տարվա փորձ:
5.	ԳՊՖ առավելագույն չափ	Պատվերի գումարի մինչև 75%, սակայն ոչ ավել քան 300000 ԱՄՆ դոլլար կամ համարժեք ՀՀ դրամ կամ Եվրո
6.	ԳՊՖ գումարի նկատմամբ տարեկան տոկոսադրույք	Սկսած 16%-ից ՀՀ դրամով վարկերի համար, սկսած14%-ից ԱՄՆ դոլարով և ԵՎՐՈ-ով վարկերի համար, որը հաշվարկվում է Հաճախորդին տրամադրված Վարկի մնացորդի վրա՝ հիմք ընդունելով տարին օրացուցային, բաժանարարը 365 օր: Տոկոսների հաշվարկը սկսվում է ֆինանսավորման գումարը Հաճախորդի՝ □Ամերիաբանկ□ ՓԲԸ-ում բացված հաշվին փաստացի մուտքագրելու օրվանից: Տոկոսների վճարման կարգը սահմանվում է Բանկի հետ կնքվող պայմանագրով: Հաշվարկված տոկոսագումարները ենթակա են վճարման բացառապես ՀՀ դրամով՝ անկախ ԳՊՖ արժույթից:
7.	ԳՊՖ սպասարկման միջնորդավճար (միանվագ)	Ֆինանսավորման գումարի 0.5%-ի չափով, որի գանձման կարգը սահմանվում է պայմանագրի համաձայն:
8.	ԳՊՖ առավելագույն ժամկետ	Մինչև 180 օր
9.	ԳՊՖ արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար կամ Եվրո
10.	Ապահովվածության միջոց	□ Շրջանառու միջոցներ □ Հաշիվների շրջանառությունը և մնացորդը □ Տվյալ պատվերից բխող դեբիտորական պարտքը և այլ իրավունքներ □ Այլ պայմանագրերի բխող իրավունքներ և դեբիտորական պարտքեր □ Սեփականատերերի երաշխավորություններ □ Բանկային երաշխիք □ Պատվիրատուի հանձնարարությամբ Հաճախորդի օգտին թողարկված ակրեդիտիվ

11.	Ժամկետանց գումարի տույժ	ժամկետանց Վարկի նկատմամբ դադարում է Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը և այդ գումարի նկատմամբ սկսվում է հաշվարկվել տարեկան 24 տոկոս: Տույժ՝ ժամկետանց վարկի 0.1 % չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար, իսկ 5 աշխատանքային օր ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ նաև տուգանք՝ ժամկետանց վարկի 2.0% չափով
12.	Ժամկետանց տոկոսի տույժ	Ժամկետանց տոկոսի 0,3%-ի չափով, իսկ 5 /հինգ/ և ավել օր ժամկետանց թույլ տալու դեպքում՝ նաև տուգանք՝ ժամկետանց տոկոսի 5 /հինգ/ տոկոսի չափով:
13.	ԳՊՖ վաղաժամկետ մարման դեպքում	Տույժ կամ տուգանք չի կիրառվում
14.	Վարկի մարում	Ժամկետի վերջում կամ պայմանագրով նախատեսված այլ պարբերականությամբ
15.	ԳՊՖ ֆինանսավորման մասին որոշման կայացման ժամկետ	Հաճախորդի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական փաթեթի ներկայացումից հետո մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան չի նախատեսվում Բանկի իրավասու մարմնի կողմից
16.	Վավերականության ժամկետը (ԳՊՖ տրամադրման մասին որոշման գործողության ժամկետ)	20 օր, եթե այլ բան նախատեսված չէ Բանկի իրավասու մարմնի կայացրած որոշմամբ
17	Վարկի պայմանների վերանայման հայտի/դիմումի ուսումնասիրման վճար*	500 000 ՀՀ դրամ

* վարկավորման պայմանների վերանայման հայտի/դիմումի ուսումնասիրման վճարը ենթակա է վճարման հաճախորդի կողմից, վերջինիս նախաձեռնությամբ և ցանկությամբ ներկայացված վերանայման հայտի բավարարման դեպքում՝ Բանկի

համապատասխան ստորաբաժանման կողմից այդ հայտի հիման վրա կատարված վերլուծության եզրակացության հիմքով: Ընդ որում, որպես կանոն վարկավորման պայմանների վերանայման այլ դեպքերում սույն սակագինը ենթակա է գանձման Մեծ վարկային կոմիտեի որոշմամբ: